ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/112

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Բողոք բերող՝ «Արալպլաստ» ՍՊԸ
ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

Մասնակցությամբ՝
«Արալպլաստ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Ալլավերդյան, ներկայացուցիչ՝ Ռ. Մկրտչյանի,
ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Դ. Գրիգորյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արալպլաստ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 09.10.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 2-2 արձանագրությամբ «Արալպլաստ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 09.10.2020թ.-ին:

09.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/112 համարի ծածկագիրը:

15.10.2020թ.-ի Ընկերության միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 20.10.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/15876-2020 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

16.10.2020թ.-ին, 23.10.2020թ.-ին, 30.10.2020թ.-ին և 06.11.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.11.2020թ.-ին:

2. «Արալպլաստ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արալպլաստ» ՍՊԸ-ն 09.10.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. 24.06.2020թ.-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետև նաև՝ Պատվիրատու) www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտարարել է թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետև նաև՝ Մրցույթ): Մրցույթի շրջանակներում նախատեսվում է ձեռքբերել «ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքներ» (այսուհետև նաև՝ Գնման առարկա): «Արալպլաստ» ՍՊԸ-ն (այսուհետև նաև՝ Մասնակից) մասնակցել է Մրցույթին, և ի թիվս այլ մասնակիցների ներկայացրել է հայտ: Մասնակցի ներկայացրած գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ-ն կազմել է 1.171.103.626 (մեկ միլիարդ հարյուր յոթանասունմեկ միլիոն հարյուր երեք հազար վեց հարյուր քսանվեց) ՀՀ դրամ, այն բոլոր մասնակիցների գնային

առաջարկներից ամենացածրն է: Սակայն Մրցույթի գնահատող հանձնաժողովը Մասնակցի գնային առաջարկը գնահատել է անբավարար և մերժել է՝ պատճառաբանելով, որ. «գնային առաջարկում ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված (•••)»:

2.1. «Արալպլաստ» ՍՊԸ-ն, «Մեծն էրիկ» ՍՊԸ-ն, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն և «Ագաթ 777» ՍՊԸ-ն (այսուհետև միասին նաև՝ Մասնակիցներ) մասնակցել են Մրցույթին: «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը հայտերի բացման նիստում մերժվել է, մյուս մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

«Արալպլաստ» ՍՊԸ

ՀՀ դրամ

Ինքնարժեք /տառերով և թվերով/	**Շահույթ /տառերով և թվերով/**	**ԱԱՀ /տառերով և**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
3	4	**5**	**6=3+4+5**
887199717	88719972	195183937	1171103626

«Մեծն էրիկ» ՍՊԸ

ՀՀ դրամ

Ինքնարժեք /տառերով և թվերով/	**Շահույթ /տառերով և թվերով/**	**ԱԱՀ /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
3	**4**	**5**	**6=3+4+5**
989785922	98978592	217752903	1306517417

«Ագաթ 777» ՍՊԸ

ՀՀ դրամ

Ինքնարժեք /տառերով և թվերով/	**Շահույթ /տառերով և թվերով/**	**ԱԱՀ /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
3	**4**	**5 .**	**6=3+4+5**
983361210	393344210	275341139	1652046833

Հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկը ներկայացրել է «Արալպլաստ» ՍՊԸ-ն:

3.1. Պատվիրատուն գնման ընթացակարգի 07.10.2020 թվականի թիվ 2-2 արձանագրությաբ Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մեժել է, պատճառաբանելով, որ. «Գնային առաջարկի հավելվածում ԱԱՀ-ն սխալ է հաշվարկած (...)»: Հարկ է նշել, որ արձանագրությամբ նկարագրված չէ, թե հաշվարկի սխալը ինչում է:

Ինչպես երևում է սույն գործի փաստերից Մասնակցի գնային առաջարկը ամենացածրն է, իսկ Մասնակցի գնային առաջարկից հետո մյուս մասնակցի ամենացծր

գինը ներառյալ ԱԱՀ-ն կազմում է 1.306.517.417 (մեկ միլիարդ երեք հարյուր վեց միլիոն հինգ հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ:

Վերոգրյալից երևում է, որ Մասնակցի գնային առաջարկը (1.171.103.626 ներառյալ ԱԱՀ-ն) 135.413.791 ՀՀ դրամով ցածր է Մասնակցի գնային առաջարկից հետո ցածր գին ներկայացարծ մյուս մասնակցի գնային առաջարկից:

Այսպիսով պատվիրատուն մերժելով Մասնակցի հայտը, ձեռնամուխ է լինում ձեռքբերել Գնման առարկան ավելի թանկ գնով: Եվ գնման առարկայի ձեռբերման համար պատրաստվում է վճարել 135.413.791 (հարյուր երեսունհինգ մխիոն չոյա հարյուր տասներեք հազար յոթ հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ ավել գումար:

3.2. Գնման գործընթացը կազմակերպելիս Պատվիրատուն պարտավոր է ղեկավարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի «Օրենքի նպատակը, սկզբունքները և գործողության ոլորտը» վերտառությամբ 3-րդ հոդվածի դրույթներով: Այդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն. «1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան (...) աշխատանքների (...), ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:»

Վերը գրված իրավական նորմերից հետևում է, որ գնման գործընթացի շրջանակներում Պատվիրատուն իրեն անհրաժեշտ աշխատանքները ձեռք բերելիս պետք է ձգտի, որպեսզի դրանք գնվեն հնարավորինս ցածր գնով՝ այդ կերպ խնայելով թե պետության, թե իր միջոցները:

Սակայն, ունենալով Գնման առարկան ցածր գնով ձեռքբերելու հնարավորություն Պատվիրատուն խախտում է օրենքի նշյալ պահանջը և փորձում է այն ձեռքբերել թանկ գնով, այդ կերպ վատնելով 135.413.791 (հարյուր երեսունհինգ միլիոն չորս հարյուր տասներեք հազար յոթ հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ գումար:»:

Վերոգրյալի հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել թիվ 2-2 արձանագրությամբ «Արալպլաստ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

«Արալպլաստ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքի լրացմամբ հայտնել է նաև հետևյալը.

«1.1 թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/112 ծածկագրով բողոքի (այսուհետև նաև Բողոք) շրջանակներում ցանկանում ենք հայտնել, որ ներկա գտնվելով Բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին «Արալպլաստ» ՍՊԸ-ն (այսուհետև նաև՝ Մասնակից) եկավ այն եզրահանգման, որ թիվ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ 20/8 ծածկագրով բաց մրցույթի (այսուհետև նաև՝ Մրցույթ), շրջանակներում Մասնակցի հայտը մերժվել է այն պատճառով, որ գնային առաջարկում առանձնածված ԱԱՀ-ի գումարը կլորացվել է դեպի ներքև ամբոջ թիվը, այլ ոչ թե դեպի վերև ամբոջ թիվը: Մրցույթի շրջանակներում Մասնակցի գնային առաջարկում առանձնացված ԱԱՀ ի գումարը կլորացված կազմու է 195.183.937 ՀՀ դրամ իսկ առանց կլորացման այն հետևյալն է 195183937.8. Նշյալից երևում է, որ առանց կլորացման ԱԱՀ-ի գումարը ութսուն լումայով ավելի է: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ այդ հանգամանքը հայտը մերժելու համար չի կարող հիմք ծառայել նախ այն պատճառով, որ թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/44 ծածկագրով բողոքի (այսուհետև նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում քննվել է նույնանման դեպք, և այդ Ընթացակարգի քննության արդյունքում բողոքը քննող անձը եկել է եզրահանգման, որ բողոքաբերի (գնման ընթացակարգի մասնակցի) հայտը ենթակա չէր մերժման: Մասնավորապես, սույն Բողոքի շրջանակներում քննվող հանգամանքները այնքանով են նման թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/44 ծածկագրով բողոքի շրջանակներում քննված բողոքի հանգամանքներին, որ Բողոքը ներկայացնելու համար հիմք է ծառայել, այն որ բողոքաբերի հայտը պատվիրատուն մերժել է այն պատճառով, որ գնային առաջարկում առանձնացված ԱԱՀ-ի գումարը (5.666.666.6 ՀՀ դրամ) կլորացվել է դեպի ներքև ամբոջ թիվը և նշվել է 5.666.666 ՀՀ դրամ, այն դեպքում, երբ ԱԱՀ-ի գումարը առանց կլորացման կազմում էր 5.666.666.6 ՀՀ դրամ, այսինքն՝ 60 (վաթսուն) լումայով ավելի էր գնային առաջարկում նշված ԱԱՀ-ի գումարից: Այսպիսով, Թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/44 ծածկագրով բողոքը քննող անձը գտել է, որ գնային առաջարկում առանձնացված ԱԱՀ-ի գումարը դեպի ներքև ամբոջ թիվը կլորացնելով բողոքաբերը (գնման ընթացակարգի մասնակիցը) գործել է իրավաչափ և դա չէր կարող պատճառ հանդիսանալ հայտը մերժելու համար:

1.2. ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետև նաև՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգիրքով կարգավորում են Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի (այդ թվում՝ ԱԱՀ-ի) հետ կապված հարաբերությունները, հարկերի դրույքաչափերը, հաշվարկման ու վճարման կարգը.

ՀՀ հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն, բացառությամբ Օրենսգրքի նույն հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-6-րդ ենթակետերով սահմանված իրավական ակտերի, հարկային հարաբերությունները չեն կարող

կարգավորվել այլ իրավական ակտերով. և եթե հարկային հարաբերությունները կարգավորող՝ հավասար իրավական ուժ ունեցող իրավական ակտերի դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարընթերցումներ, ապա դրանք մեկնաբանվում և կիրառվում են հարկ վճարողի օգտին:

Նշենք, որ Օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասի 1-6-րդ ենթակետերում, որպես հարկային իրավահարաբերություններ կարգավորող իրավական ակտեր նշված չեն «Գնումների մասին» ՀՀ օրենքը և այդ օրենքի իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ և այլ իրավական ակտերը:

Նշյալից հետևում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը և այդ օրենքի իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ և այլ իրավական ակտերը հարկային, այդ թվում՝ ԱԱՀ-ի հետ կապված իրավահարաբերություններ չեն կարող կարգավորել և ԱԱՀ ի հաշվարկման կարգը կարգավորվում է Օրենսգրքի նորմերով:

Ավելին, «Գնումների մասին» ՀՀ օրենքի իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ և այլ իրավական ակտերի նորմերը չեն կարող գերակայել Օրենսգրքով սահմանված նորմերի նկատմամբ, քանի որ ՀՀ Սահմանադրության «Իրավական նորմերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 5 րդ հոդվածի 2-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 40 րդ հոդվածի 1 ին մասի 1 ին կետի բովանդակությունից բխում է, որ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում կիրառվում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը:

Ուստի առաջնորդվելով այդ հանգամանքով, Մասնակիցը գնային առաջարկում ԱԱՀ-ի գումարը հաշվարկելիս և առանձնացնելիս ղեկավարվել է Օրենսգրքի 318-րդ հոդվածով: Մասնավորապես, գնային առաջարկում լումաները չնշելը՝ ԱԱՀ ի գումարը առանց լումաների գրելը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Օրենսգրքի 318-րդ հոդվածի համաձայն. «1. Հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):»:

Ավելին, եթե անգամ մի պահ ընդունենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը և այդ օրենքի իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ և այլ իրավական ակտերը կարող են կարգավորել ԱԱՀ-ի հաշվարկման հետ կապված հարաբերություններ, ապա անգամ այդ դեպքում, այդ կարգավորումները սույն ընթացակարգի շրջանակներում պետք է դիտարկվեն և մեկնաբանվեն Օրենսգրքի 318-րդ հոդվածի լույսի ներքո և ի օգուտ Մասնակցի, այսինքն՝ գնային առաջարկում Մասնակցի կողմից լումաները անտեսելը չնշելը պետք է դիտվի որպես իրավաչափ գործողություն, քանի որ դա բխում է Մասնակցի շահերից՝ որպես հարկ վճարող:

Եվ վերջիվերջո, մեկ դրամի չհասնող լումաների գումարը ոչ ճիշտ կլորացնելու պատճառաբանությանը Մասնակցի հայտը մերժելը հանգեցնելու է մի քանի հարյուր միլիոն դրամի հասնող պետական միջոցների վատնմանը, ինչը մեր կարծիքով ամբողջությամբ խաթարում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի սկզբունքները և նպատակները:»:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.10.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15379-2020 գրությամբ դիմել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Արալպլաստ» ՍՊԸ-ի կողմից 09.10.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 13.10.2020թ.-ին ներկայացված թիվ Մ-39724-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «Արալպլաստ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կողմից ներկայացված բողոքը՝ տեղեկացնում եմ, որ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 7-ի N 2-2 արձանագրությամբ մերժվել է ընկերության հայտը՝ պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն գտնում է, որ ընկերության հայտը գնահատվել է սահմանված կարգով և վերջինիս կողմից ներկայացված բողոքն անհիմն է ու ենթակա է մերժման:

Օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ կից ներկայացնում եմ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Ընկերության 15.10.2020թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 20.10.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/15876-2020 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով Հանձնաժողովի կողմից կազմված արձանագրություններին, բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/112 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 24.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արալպլաստ» ՍՊԸ-ն:

iii. «Արալպլաստ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափաբաժի նների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքներ	Ութ հարյուր ութսունյոթ միլիոն հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր տասնյոթ (887 199 717)	Ութսունութ միլիոն յոթ հարյուր տասնինը հազար ինը հարյուր յոթանասունե րկու (88 719 972)	Մեկ հարյուր իննսունհինգ միլիոն հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր երեսունյոթ (195 183 937)	Մեկ միլիարդ հարյուր յոթանասունմեկ միլիոն հարյուր երեք հազար վեց հարյուր քսանվեց (1 171 103 626)

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.10.2020թ.-ի նիստի թիվ 2.2 արձանագրության համաձայն՝ «Արալպլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝

- Հավելված N 1.1 -ի մասով՝ Մասնակցի կողմից Հավելված N 1.1-ում 32-րդ, 33-րդ, 34-րդ, 54-րդ, 55-րդ, 72-րդ, 73-րդ և 74-րդ տողերի սարքավորումների համար ներկայացված չէ մանրամասն տեխնիկական բնութագիր, իսկ 59-ից-66-րդ և 69-րդ տողերի սարքավորումների համար ներկայացված չեն մոդելներ,
- Հավելված N 2-ի մասով՝ գնային առաջարկի հավելվածում ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշել է «Արալպլաստ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Արալպլաստ» ՍՊԸ-ի կողմից 09.10.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ

մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից

ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 24.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17: 00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 24.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացած «Արալպլաստ» ՍՊԸ-ն գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

Չափաբաժի նների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքներ	Ութ հարյուր ութսունյոթ միլիոն հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր տասնյոթ (887 199 717)	Ութսունութ միլիոն յոթ հարյուր տասնինը հազար ինը հարյուր յոթանասունե ր կու (88 719 972)	Մեկ հարյուր իննսունհինգ միլիոն հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր երեսունյոթ (195 183 937)	Մեկ միլիարդ հարյուր յոթանասունմեկ միլիոն հարյուր երեք հազար վեց հարյուր քսանվեց (1 171 103 626)

Հանձնաժողովի 07.10.2020թ.-ի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշել է «Արալպլաստ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ Հավելելված N 2-ի մասով՝ գնային առաջարկի հավելվածում ԱԱՀ-ն սխալ է հաշվարկված:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Արալպլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

գնային առաջարկի «Ինքնարժեք» և «Շահույթ» սյունակների հանրագումարի արդյունքում ավելացված արժեքի հարկի գումարը պակաս է հաշվարկվել 8 (ութ) լումայով: Մասնավորապես՝ Մասնակցի կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը պետք է կազմեր 195 183 937.8 ՀՀ դրամ՝ գնային առաջարկում նշված 195 183 937 ՀՀ դրամի փոխարեն /887 199 717 (ինքնարժեք) + 88 719 972 (շահույթ) * 20%/՝ որպիսի պայմաններում պետք է փոխվեր նաև Մասնակցի ներկայացրած ընդհանուր գինը, այն կկազմեր 1 171 103 626.8 ՀՀ դրամ, ըստ այդմ՝ «Ինքնարժեք», «Շահույթ» և «ԱԱՀ» սյունակներում նշված գումարների հանրագումարի և «Ընդհանուր գինը» սյունակում տառերով և թվերով լրացված արժեքի գումարի միջև առկա է 8 (ութ) լումա գումարի չափով տարբերություն:

ՀՀ հարկային օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների ու գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ԱԱՀ-ն հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

Նույն օրենսգրքի 318-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային հաշվարկներում, ինչպես նաև հարկային մարմնի կողմից կազմվող և հարկ վճարողին տրվող ծանուցագրերում, տեղեկանքներում, արձանագրություններում, ստուգման ակտերում և այլ փաստաթղթերում հարկ վճարողի հարկային պարտավորությունների գումարների, դեբետային գումարների և փոխհատուցման ենթակա գումարների հաշվառման համար, որպես չափման միավոր, ընդունվում է դրամը (լումաներն անտեսվում են):

Բողոքներ քննող անձը, գործում առկա փաստական հանգամանքերը վերլուծության ենթարկելով վերը բերված իրավական նորմերի և դրանց հիման վրա արված մեկնաբանությունների համատեքստում, հանգում է այն հետևության, որ Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը համապատասխանում է վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին, քանի որ մասնակցի կողմից տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը ճիշտ է հաշվարկված՝ հետևաբար պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող ընդհանուր գինը նույնպես ճիշտ է հաշվարկվել: Մասնավորապես՝ Մասնակիցն իր կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարն առանց լումա նշելով ելել է ՀՀ հարկային օրենսգրքի 318-րդ հոդվածով սահմանված և վերապահված իրավունքից, այն է՝ որպես չափման միավոր, ընդունել է միայն դրամը, իսկ լումաներն՝ անտեսել, որի արդյունքում «Ընդհանուր գինը» սյունակում տառերով և թվերով լրացված արժեքի գումարը ձևավորվել է առանց լումայի:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ, տվյալ դեպքում, «Արալպլաստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի «ԱԱՀ» սյունակում առկա գումարների չափի միայն դրամ՝ առանց լումա նշելու հանգամանքը չպետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Արալպլաստ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու մասին որոշումն ոչ իրավաչափ է, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից չի պահպանվել Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արալպլաստ» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/112 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/8» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 07.10.2020թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրությամբ կայացված «Արալպլաստ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**